ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 05.11.2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՅԻՍ ՄԱՅԻՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-25078-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև նաև՝ Պալատ**) խորհուրդը՝ Արսեն Հարությունյանի նախագահությամբ, խորհրդի անդամներ՝, Մարինե Ֆարմանյանի, Թամարա Բաղդասարյանի, Վարազդատ Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Ցոլակ Մարգարյանի, Ռոման Ահարոնյանի և Պավել Գյուլումյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-25078-2-Ա որոշման բողոքարկումը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Սամվել Վարդանյանը (**այսուհետև՝ Դիմող կամ Բողոք բերող անձ**), դիմելով ՀՀ փաստաբանների պալատին (**այսուհետև՝ Պալատ**), խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել փաստաբան Մայիս Հովհաննիսյանին:

Մայիս Հովհանիսյանին (**այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) վերագրվել է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև հանձնարարության ընթացքի մասին վստահորդին չտեղեկացնելու վարքագիծը:

Պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև՝ Հանձնաժողով**), 05.11.2025 թվականի թիվ ԿԳ-25078-2-Ա որոշմամբ (**այսուհետև՝ Որոշում**) Փաստաբանի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ՝ «***նկատողություն***»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25078-2-Ա կարգապահական վարույթը կարճել է:

Դիմողը Որոշման դեմ 04.12.2025թ. բողոք է ներկայացրել ՀՀ փաստաբանների

պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**):

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-ԿԳ-25078-2-Ա որոշման էությունը.</u>**

Հանձնաժողովը Որոշմամբ նշել է հետևյալը.

«(…) Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողից ընդունած հանձնարարության պատշաճ ընթացքն ապահովելուն ուղղված գործողություններ կատարելու մասին ապացույցների առկայության դեպքում դրանք ողջամտորեն պետք է լինեին Փաստաբանի տիրապետման ներքո և ներկայացվեին Հանձնաժողովին, ինչը, սակայն, տեղի չի ունեցել, իսկ Փաստաբանը նաև չի նշել այդպիսի ապացույցները հավաքագրելու և/կամ Հանձնաժողովին ներկայացնելու անհնարինության մասին և չի կատարել դրանից բխող որևէ գործողություն՝ ուղղված այնպիսի ապացույցների ձեռք բերմանը, որոնցով հնարավոր կլիներ փաստել Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջների խախտման բացակայությունը:

Ընդ որում, քննարկվող հարցի մասով ապացույցներ ներկայացնելու պարտականությունը հենց Փաստաբանին պատկանելու հանգամանքը բխում է նաև այն իրողությունից, որ իր կողմից որևէ գործողության կատարման վերաբերյալ ապացույցների առկայության դեպքում տրամաբանորեն դրանք գտնվում են հենց Փաստաբանի տիրապետման ներքո, իսկ նույն գործողության չկատարումը, սույն դեպքում՝ բարեխիղճ կամ այլ առումով պատշաճ իրավաբանական օգնության չտրամադրումն ինքնին հանդիսանում է բացասական (ժխտողական) փաստ, որի ապացուցման պարտականությունը չի կարող դրվել բացասական փաստ վկայակոչող կամ դրական փաստը ժխտող անձի՝ սույն դեպքում Դիմողի վրա:

Այսպիսով, Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը թույլ է տվել Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտում, որի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի** 3.6.1 **ենթակետի խախտման առկայությանը՝ Հանձնաժողովը փաստում է, որ վարույթի նյութերում առկա են մի շարք նյութեր, որոնք ի ցույց են դնում Դիմողի և Փաստաբանի միջև կանոնավոր կապի առկայությունն ու հանձնարարության կատարման ընթացքի մասին Դիմողի տեղեկացվածությունը՝ անկախ Փաստաբանի տրամադրած տեղեկատվության ճշմարտացիությունից, որին Հանձնաժողովը սույն վարույթով և սույն ենթակետի շրջանակներում անդրադառնալ իրավասու չէ:

Ընդ որում՝ հատկանշական է, որ նմանատիպ նյութեր ներկայացրել են ինչպես Փաստաբանը, այնպես էլ՝ Դիմողը, ում ներկայացրած նյութերից, ի դեպ, հետևում է, որ կողմերը կապ են պահպանել ինչպես նամակագրությամբ, այնպես էլ հեռախոսազանգերով, որոնք առանձին դեպքերում տևել են նույնիսկ տասնյակ րոպեներ, ուստի առկա պայմաններում հնարավոր չէ հաստատված համարել, որ Փաստաբանը Դիմողին կանոնավորապես չի տեղեկացրել վերջինիս գործի ընթացքի մասին և չի ապահովել կայուն կապ Դիմողի հետ, իսկ առանձին դեպքերում Դիմողի՝ ուշ

արձագանքված կամ թեկուզև չարձագանքված զանգերն ու նամակներն ինքնին բավարար հիմք չեն՝ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման փաստը հաստատելու համար:

Այսպիսով, Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը թույլ չի տվել Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտում, ուստի այդ մասով Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության:

Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ թեև տվյալ իրավիճակում Փաստաբանը Դիմողին իրավական օգնություն ցույց տալիս թույլ է տվել սույն որոշմամբ նկարագրված խախտումը, այդուհանդերձ՝ Դիմողը դրանց արդյունքում չի զրկվել իր ենթադրյալ կամ իրական իրավունքների պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունից, այսինքն՝ խախտումն այդ իմաստով ծանր ու անդառնալի հետևանքներ չի առաջացրել:

Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ ձեռք չեն բերվել, բայց և ձեռք չի բերվել որևէ ապացույց՝ կարգապահական խախտումը դիտավորությամբ կատարված լինելու մասին: Միաժամանակ, Հանձնաժողովը կարևորում է Փաստաբանի անձը և նրա դրական բնութագիրը՝ հաշվի առնելով դիտարկվող ժամանակահատվածում կարգապահական տույժի բացակայությունը: Հետևաբար, Հանձնաժողովի գնահատմամբ՝ Փաստաբանի նկատմամբ որպես կարգապահական տույժ անհրաժեշտ է **կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» տույժի տեսակը:**

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Դիմողը հայտնել է, որ իր բողոքն է արտահայտում ԿԳ-25078 կարգապահական գործի 05.11.2025թ. Կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-25078-2-Ա որոշման դեմ:

Դիմողը նշել է, որ Որոշման մեջ նշվում է, որ ի պատասխան 19.08.2025թ. գրության, ինքը նյութեր չի ներկայացրել՝ որպես ապացույց:

Դիմողը հիշեցրել է, որ գրավոր դիմել է Պալատին՝ ապացույցները ներկայացնելու անձամբ Պալատի նախագահին, բայց քանի որ վերջինս չի ընդունել, ինքը ապացույցները ներկայացրել է հանձնաժողովի նիստերի քարտուղարին 25.09.2025թ. և նույն օրն էլ Հանձնաժողովին դիմում է գրել՝ խոստանալով Մ.Հովհաննիսյանի հետ իրենց հեռախոսազրույցների ձայնագրությունները ներկայացնել հանձնաժողովի նիստին, սակայն նիստի օրը հանձնաժողովի նախագահը թույլ չի տվել միացնել ձայնագրությունները:

Դիմողն իր դժգոհությունն է հայտնել, որ Փաստաբանին տրվել է ընդամենը նկատողություն, բայց Եվրոպական բոլոր չափանիշներով Փաստաբանը կզրկվեր արտոնագրից:

Դիմողը հավելել է, որ նիստի ընթացքում Փաստաբանը խաբում էր նույնիսկ հանձնաժողովի անդամներին:

Նիստը զեկուցողը հայտնել է, որ Մ.Հովհաննիսյանին արտոնագիր է տրվել 2013թ. և մինչ օրս նրա նկատմամբ չկան կարգապահական տույժեր: Բայց դիմողն իր բողոքով հիշեցրել է, որ 2013-2025թթ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ հարուցվել է 3

կարգապահական վարույթ:

11.08.2018թ. թիվ ԿԳ-18023 գործով Կարգապահական հանձնաժողովը կայացրել է թիվ ԿԳ/156-Ա որոշումը՝ նկատողություն փաստաբան Մ.Հովհաննիսյանին 2015 հոկտեմբեր - 2018թ. հունվար ամիսներն ընկած ժամանակաշրջանի համար 140 000 ՀՀ դրամ անդամավճարի պարտքի համար:

27.08.2019թ. թիվ ԿԳ-19009 գործով Կարգապահական հանձնաժողովը կայացրել է թիվ ԿԳ/119-Ա որոշումը՝ նկատողություն փաստաբան Մ.Հովհաննիսյանին 2018 փետրվար - 2019թ. հունվար ամիսներն ընկած ժամանակաշրջանի համար 60 000 ՀՀ դրամ անդամավճարի պարտքի համար:

24.10.2020թ. թիվ ԿԳ-20010 գործով Կարգապահական հանձնաժողովը կայացրել է թիվ ԿԳ/85-Ա որոշումը՝ կարճել դատավոր Հարություն Մանուկյանի դիմումի հիման վրա Մայիս Հովհաննիսյանի նկատմամբ հարուցված վարույթը:

Վերոնշյալ 1-ին և 2-րդ որոշումներով Կարգապահական հանձնաժողովը պարտավորեցրել է Մ.Հովհաննիսյանին մարել անդամավճարի պարտքը: Վերոգրյալ 3-րդ որոշման մեջ հիշատակվում է, որ նա այդ պարտքը մարել է և դրանով հանդերձ մարվել են նաև Մ.Հովհաննիսյանի նկատմամբ սահմանված կարգապահական տույժերը:

Դիմողը պնդել է, որ 05.11.2025թ. Կարգապահական հանձնաժողովի նիստի ձայնագրությունը լիարժեք ապացույց է, և հանձնաժողովի անդամն էլ այդ ընթացքում հաստատում է, որ Մ.Հովհաննիսյանը չի հերքում իր անգործությունը: Այդ նիստի ձայնագրությունը լսելով, արդյոք Փաստաբանների պալատը, Պալատի կարգապահական հանձնաժողովը պարտավորեցրել են Մ.Հովհաննիսյանին իրենց վերադարձնել խաբեությամբ շորթած 350 000 ՀՀ դրամը:

Բողոքաբերը խնդրել է վերանայել Կարգապահական հանձնաժողովի որոշումը, փաստաբան Մ.Հովհաննիսյանի նկատմամբ սահմանել խիստ կարգապահական տույժ և պարտավորեցնել վերադարձնել իր 350 000 ՀՀ դրամ գումարը:

Դիմողը նշել է, որ Գումարը հետ վերադարձնելու պարագայում գուցե վերանայի իր որոշումը, հակառակ պարագայում՝ Պալատի դեմ բողոքներ է ուղարկելու Եվրոպական կառույցներ:

4. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբանի և Դիմողի միջև 2024 թվականի մայիսի 23-ին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով Փաստաբանը ստանձնել է Դիմողի գործը՝ կապված վերջինիս ժառանգության իրավունքի իրացման հետ: ***Տվյալ փաստը հաստատվում է վարույթում առկա պայմանագրի պատճենով, կողմերի բացատրություններով:***

2. Փաստաբանը և Դիմողը պարբերաբար գտնվել են կապի մեջ՝ ինչպես Դիմողի, այնպես էլ Փաստաբանի նախաձեռնությամբ, իսկ կապը որոշ դեպքերում դրսևորվել է նամակագրություններով, որոշ դեպքերում՝ տարբեր տևողությամբ զանգերով: ***Տվյալ փաստը հաստատվում է կողմերի ներկայացրած էկրանային պատկերներով (սքրինշոթերով), որոնց իսկությունն ու այլ հատկանիշները կողմերը չեն վիճարկել:***

3. Փաստաբանը Դիմողին բարեխիղճ իրավաբանական օգնություն չի ցուցաբերել: ***Տվյալ փաստը հաստատվում է Դիմողի պնդումներով, իսկ Փաստաբանը չի ներկայացրել հակառակն ապացուցող վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցություն:***

4. Պալատի կարգապահական հանձնաժողովը 05.11.2025 թվականի թիվ ԿԳ-25078-2-Ա որոշմամբ Փաստաբանի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25078-2-Ա կարգապահական վարույթը կարճել է:

5. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի համաձայն՝** *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Օրենքի 39.10 **հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) ***նկատողություն****.*

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 **հոդվածի** 2-**րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից

մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000):

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը կարգապահական տույժը կիրառելիս հաշվի է առել այն փաստը, որ Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել Դիմողին:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը իրավացիորեն արձանագրել է, որ Փաստաբանի անգործության հետևանքով՝ Դիմողը չի զրկվել իր ենթադրյալ կամ իրական իրավունքների

պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունից, այսինքն՝ խախտումն այդ իմաստով ծանր ու անդառնալի հետևանքներ չի առաջացրել:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առել՝ Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով իրավացիորեն նրա նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառել է «նկատողություն»:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը չի խախտել իրեն վերապահված հայեցողական լիազորության իրավունքի իրացման սահմանները և պատշաճ կարգով հիմնավորել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժի կիրառման ընտրության համաչափությունը:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը եզրահանգում է, որ Փաստաբանը տույժի համաչափության մասով պատասխանատվության է ենթարկվել իրավաչափ, քանի որ Որոշումը համապատասխանում է Հանձնաժողովի՝ հայեցողական լիազորությունների իրացման սահմաններին: Ուստի՝ նման պայմաններում Փաստաբանը չէր կարող ենթարկվել ավելի խիստ կարգապահական պատասխանատվության:

Բացի այդ, Խորհուրդն արձանագրում է, որ Օրենքով ՀՀ փաստաբանների պալատին է վերապահվել վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից Օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ, իսկ նշված պահանջները խախտելու դեպքում **իր անդամների նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ իր հայեցողությամբ**, **իսկ փաստաբանի նկատմամբ ավելի մեղմ կամ խիստ կարգապահական տույժ կիրառելը չի առնչվում Դիմողի իրավունքներին ու օրինական շահերին**:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից ունեցած նախկին կարգապահական տույժերին, հարկ է նշել, որ Օրենքի **Օրենքի 39.10-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝** *<u>փաստաբանը համարվում է կարգապահական տույժի չենթարկված՝</u> նկատողության դեպքում՝ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեց ամիս հետո:*

Վերոգրյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, մասնավորապես՝ «նկատողություն» տույժի տեսակը կիրառելու պարագայում այդ որոշումը՝ որպես անհատական իրավական ակտ ուժի մեջ է մտնում դրա հասցեատիրոջ իրազեկվելու օրվան հաջորդող օրվանից:

Ըստ այդմ, այդ պահից սկսում է հաշվարկվել «նկատողություն» տույժի մարման վեցամսյա ժամկետը, որի լրանալու փաստով փաստաբանը համարվելու է տույժի չենթարկված, ինչն իր հերթին բացառում է դրանով պայմանավորված որևէ բացասական հետևանքի առաջացում փաստաբանի համար:

Վերոնշյալից ելնելով իրավացիորեն արձանագրվել է, որ Փաստաբանը 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

Անդրադառնալով Բողոքաբերի այն փաստարկին, որ Հանձնաժողովը չի ընդունել հեռախոսազրույցների ձայնագրությունները, հարկ է նշել, որ Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ սպասարկող անձնակազմի աշխատակիցն

իրավունք ունի փաստաբանից կամ կարգապահական խախտման մասին հաղորդում (դիմում, տեղեկանք, միջնորդություն) ներկայացրած անձից (մարմնից) պահանջելու ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, որոնք տվյալ անձանց (մարմինների) ազդեցության ոլորտում են կամ պետք է լինեն: Ապացույց ներկայացնելու պահանջը ենթակա է կատարման այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կատարման անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը գրավոր դիմում է փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին՝ նշելով անհնարինության պատճառները: Փաստաբանների պալատի նախագահն իր որոշմամբ կարող է սահմանել նոր ժամկետ կամ հարգելի ճանաչել ապացույց չներկայացնելու պատճառները:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում պահանջված ապացույցը չներկայացնելու կամ ապացույց ներկայացնելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում դա կարող է մեկնաբանվել ի վնաս պահանջի հասցեատիրոջ, եթե ապացուցման ենթակա փաստը, որի վերաբերյալ անհրաժեշտ էր պահանջվող ապացույցը, մնում է չապացուցված:

Նշված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ օրենսդիրը ամրագրելով կարգապահական վարույթի կողմերի ապացույց ներկայացնելու իրավունքը, նախատեսել է նաև դրա կիրառման կառուցակարգը: Հետևաբար օրենքով սահմանված ժամկետներում ապացույց չներկայացնելու դեպքում հետագայում կողմերը զրկվում են ապացույցներ ներկայացնելու իրավունքից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Փաստաբանների պալատի նախագահն իր որոշմամբ սահմանել նոր ժամկետ կամ հարգելի է ճանաչել ապացույց չներկայացնելու պատճառները:

Սույն դեպքում, Պալատը իր 05.09.2025թ. գրությամբ տեղեկացրել է Դիմողին համապատասխան կարգավորումների մասին, սակայն Դիմողը չի ներկայացրել համապատասխան դիմում:

Այսպիսով՝ Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Հանձնաժողովի կողմից սույն գործով կատարվել է պատշաճ քննություն, նյութական իրավունքի նորմերը մեկնաբանվել և կիրառվել են ճիշտ կերպով, ինչի արդյունքում կատարվել են իրավաչափ եզրահանգումներ և կայացվել է իրավաչափ Որոշում, որը ներկայացված Բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում ենթակա չէ վերացման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի** 1-**ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26-**րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը՝**

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 05.11.2025 թվականի «Փաստաբան Մայիս Մայիսի Հովհաննիսյանին (արտոնագիր՝ թիվ 1724) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25078-2-Ա որոշման դեմ Սամվել Վարդանյանի կողմից 04.12.2025 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 05.11.2025 թվականի թիվ ԿԳ-25078-2-Ա որոշումը:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Արսեն Հարությունյան**

05 հունվարի 2026թ.
թիվ ԿԳ/01-Ա
ք. Երևան